ՄԱՀ
ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻ
(1899—1980)

Նոյեմբերի 4-ին վախճանվեց Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, արվեստագիտության դոկտոր, Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի դիրեկտոր Սարգիս Ալեքսանդրի Մելիքսեթյանը:

Ս. Ա. Մելիքսեթյանը ծնվել է 1899 թվականի սեպտեմբերի 5-ին Կիրովաբադում (Ադրբեջանական ՍՍՀ): Նրա ընտանիքը այնուհետև տեղափոխվել է Թիֆլիս, ուր և նա իր սկզբնական կրթությունը ստացել է տեղի մանկավարժների Օրբելյանների պանսիոնատում և ապա Ա. Մանթաշյանի անվան առևտրական դպրոցում:

Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում միջնակարգ իր կրթությունը ստանալուց հետո, հետագա տարիներին հաճախում է Թիֆլիսի Ժողովրդական համալսարանի դասընթացներին:

Սկսած 1910-ական թվականների վերջերից Ս. Մելիքսեթյանը զբաղվում է գրական փորձերով և թատերական արվեստով: Քսանական թվականների սկզբից նա ակտիվորեն մասնակցում է այժմյան Գ. Սունդուկյանի անվան թատրոնի ստեղծագործական կյանքին և զբաղվում թատերական քննադատությամբ ու թատրոնի պատմության ուսումնասիրությամբ:

Երևանական թվականներին նրա նախաձեռնությամբ Երևանում կազմակերպվում է հանրապետական թատերական տեխնիկումը, ինչպես նաև Հայաստանի թատերական թանգարանը: Նույն թվականներին նա Ազատ Վշտունու հետ հրատարակում է «Խորհրդային արվեստ» (ներկայիս «Սովետական արվեստ») ամսագիրը:

Ս. Մելիքսեթյանը մեծ աշխատանք է կատարել նաև մեր ազգային թատրոնի պատմությանը վերաբերող թատերական թանգարանի կազմակերպման գործում:

Ս. Մելիքսեթյանի վաստակը մեծ է նաև որպես դասախոս և մանկավարժ: Նա երկար տարիներ դասախոսել է Երևանի թատերական տեխնիկումում, իսկ ապա նաև՝ թատերական ինստիտուտում, որի հիմնադիրներից մեկը եղել է ինքը:

Երկար տարիներ նա աշխատել է Հայաստանի արվեստի գործերի վարչությունում և մի շարք թատերագետների հետ հիմնել է թատերական ընկերությունը:

1956 թ. Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության կողմից նրան շնորհվել է Հայկական ՍՍՀ արվեստի վաստակավոր գործչի կոչում:

1972 թ. մարտին նրան շնորհվել է արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան՝ «Սովետահայ թատրոնի պատմությունը» ուսումնասիրության համար:

Նա հեղինակ է նաև բազմաթիվ թատերագիտական արժեքավոր ուսումնասիրությունների և մենագրությունների:

1964 թվականից Ս. Մելիքսեթյանը նշանակվել է Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի հանրապետական թանգարանի դիրեկտոր:

Հանգուցյալը 1967 թվականից սկսած, որպես Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, իր սրտագին և օգտակար ծառայությունն է բերել Նորին Սուրբ Օծության բոլոր ձեռնարկներին: Նրա ծառայությունը Մայր Աթոռում միշտ բարձր է գնահատվել Հայոց Հայրապետի կողմից՝ արժանանալով Նրա գնահատությանն ու օրհնությանը:

1964 թվականից Ս. Մելիքսեթյանը «Էջմիածին» ամսագրի խմբագրության առաջարկով եղել է նրա խմբագրական մարմնի անդամ և ապա կարճ ժամանակ հետո Ամենայն Հայոց Վազգեն Ա կաթողիկոսի կողմից հրավիրվել՝ անդամակցելու Գերագույն հոգևոր խորհրդին:

Դոկտ. Ս. Մելիքսեթյանի մահվան առիթով Վեհափառ Հայրապետը հետևյալ ցավակցական հեռագիրը հղեց հանգուցյալի ընտանիքին և հարազատներին.

Սգակիր տիկին Մելիքսեթյանին և ընտանիքին

Երևան

Տխուր սրտով գրի ենք առնում սույն տողերը Ձեզ ներկայացնելու համար Մեր ցավակցությունը անմոռանալի պրոֆեսոր Սարգիս Մելիքսեթյանի մահվան առթիվ: Սրտանց մասնակցում ենք Ձեր մեծ սգին և աղոթում հանգուցյալի բարի հոգու խաղաղության համար, հավիտենական լուսո աշխարհի բարձունքներում:

Սարգիս Մելիքսեթյանը Թբիլիսիից տեղափոխվելով շատ երիտասարդ տարիքից, անսակարկ կերպով իր ճակատագիրը կապեց մահվան անդունդից փրկված մեր երկրի ճակատագրի հետ և վաթսուն տարիներ շարունակ նվիրվեց հայրենի մշակութային կյանքի վերաշինության և ծաղկման, անսպառ եռանդով, ինքնամոռաց աշխատանքով ու ստեղծարար տաղանդով:

Իսկ վերջին մոտ քսան տարիների ընթացքին, թեև միշտ բազմազբաղ, իր աշխատանքի թանկագին բաժինը բերեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հայրենասիրական առաքելության, իբրև մշտական գործոն անդամ Գերագույն հոգևոր խորհրդիս:

Պրոֆ. Սարգիս Մելիքսեթյանի վախճանումով նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը կորցնում է իր ամենաազնիվ ու հայրենաշունչ մեկ գործակցին:

Այս պահին, երբ Սարգիս Մելիքսեթյանի հոգին բաժնվում է այս անցավոր աշխարհից և բարձրանում դեպի հավերժություն, Սուրբ Էջմիածնից և Մեր սրտից բերում ենք նրան վերջին օրհնությունն և օրհնություն:

Օրհնություն նրա անբասիր կյանքին, օրհնություն՝ հայ մշակույթին ու արվեստին մատուցած իր վաստակին: Օրհնություն և հոգու մխիթարություն վշտակիր տիկին Մելիքսեթյանին և բոլոր հարազատներին:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին,
5 նոյեմբեր 1980 թ.

Մայր Աթոռում միշտ երախտագիտությամբ կհիշվի վաստակավոր արվեստաբանի, թատերագետ գիտնականի պայծառ անունն ու գործը:

Նոյեմբերի 9-ին, կիրակի օրը, Մայր տաճարում Հայոց Հայրապետի նախագահությամբ կատարվում է մասնավոր հոգեհանգիստ դոկտ. Սարգիս Մելիքսեթյանի հոգու խաղաղության համար, նրա հարազատների և ընկերների ներկայությամբ:

Հարգա՜նք նրա անվան, գործին և հիշատակին: